ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Արտակարգ իրավիճակների համակարգի հարգելի՛ աշխատակիցներ, վետերաննե՛ր, սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա կապակցությամբ:

Ձեր ամենօրյա աշխատանքը դուք կատարում եք որպես առաքելություն՝ երբեմն ձեր իսկ անձնական զոհողության գնով:

Մեր հասարակությունը պաշտպանված և անվտանգ է նաև ձեր նվիրված և սրտացավ աշխատանքի շնորհիվ:

Ժամանակակից աշխարհի առկա մարտահրավերը, վտանգները և ռիսկերը ամենօրյա լրացուցիչ բեռ են դնում ձեր ուսերին, սակայն դուք դա կրում եք մեծ պատասխանատվությամբ և ցանկացած խնդիր կարողանում եք լուծել հնարավորինս նվազագույնի հասցված վնասներով:

Այս ամենը ձեր համակարգի ամենօրյա կատարելագործման և զարգացման շնորհիվ է:

Հարգելի՛ աշխատակիցներ, ևս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիդ՝ մասնագիտական տոնի առթիվ: Իմ խոնարհումն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց մասնագիտական պարտքը կատարելիս զոհաբերել են իրենց կյանքը՝ հանուն բնակչության անվտանգության:

Մաղթում եմ ձեզ անփորձանք և խաղաղ ծառայություն:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան